ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 հունվարի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

2
(3033)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻ ԵՎ Ա. ՔՈՉԱՐՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԹԵԺ Է ԱՆՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ անհետ կորած զինվորների ծնողների եւ ԱԺ պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի միջեւ հունվարի 10-ին՝ ուրբաթ օրը կայացած հանդիպումը բավականին թեժ է անցել:

«Ժողովուրդ»-ին պատմեցին, որ անհետ կորած զինվորների ծնողները շատ վրդովված են եղել ու խստորեն պահանջել են, որ իրենց որդիների ճակատագրի մասին հստակ տեղեկություններ վերջապես տրամադրեն: Անդրանիկ Քոչարյանն էլ իր հերթին ոգեւորված ու բարձր տոնայնությամբ պատասխանել է ծնողներին, պահանջել՝ նախ իր հետ «այդպես» չխոսեն, ինչն իրավիճակն ավելի է լարել. հնչած բղավոցները միջանցքում են անգամ լսելի եղել: Հետո, սակայն, Անդրանիկ Քոչարյանը տեղի է տվել ծնողների ճնշումներին, հանդարտվել է ու խոստացել է եւս մեկ հանդիպում կազմակերպել ԱԺ-ում եւ հստակ պատասխաններ տալ ծնողներին:

Հիշեցնենք, որ տարեվերջին անհետ կորած զինծառայողների հարազատները փակել էին Բաղրամյան պողոտան՝ պահանջելով հանդիպում Արցախյան 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի հետ: Բայց այդ օրը Քոչարյանը չընդունեց ծնողներին: Ավելի ուշ նրանց ընդունել էր Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը՝ խոստանալով հանդիպում կազմակերպել: Հանդիպումը կազմակերպվեց, բայց անհետ կորած զինծառայողների հարազատները իրենց հուզող հարցերի պատասխաններն այդպես էլ չեն ստացել:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս հանդիպման վերաբերյալ մեկնաբանություններ ստանալ հանդիպման կողմերից: Սակայն Անդրանիկ Քոչարյանն ի սկզբանե հրաժարվել էր մեզ հետ զրուցելուց, իսկ ծնողները չցանկացան իրենց անուններով հանդես գալ՝ պատճառաբանելով, թե այդ դեպքում կվնասեն իրենց երեխաներին:

Բարձրագույն դատական խորհուրդը չի տիրապետում իրավիճակին. մասնագիտական հանրույթը անտեսվել է սահմանադրական անկախ մարմնի կողմից: «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ է հայտնվել ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմակերպված, Դատական իշխանությանը նվիրված միջոցառման օրակարգը, որտեղ նշված է, որ ժամը 12:15-ին պետք է 5 րոպեանոց ելույթով հանդես գա ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, մինչդեռ հունվարի 8-ին պաշտոնապես հայտարարություն տարածվեց, որ ԱԺ նախագահը հունվարի 8-14-ը լինելու է ամենամյա արձակուրդում: Այսինքն՝ ԲԴԽ նորանշանակ նախագահ Արթուր Աթաբեկյանը չի տիրապետում իրավիճակին եւ անգամ չի հանձնարարել ճշտել պետական պաշտոնյաների գրասենյակից՝ նրանք կմասնակցե՞ն միջոցառմանը, հաստատվե՞լ է նրանց ելույթը, թե՞ ոչ: Սա ուղիղ գնահատական է ԲԴԽ աշխատանքի վերաբերյալ, փաստում է, թե որքան են նրանք կտրված իրականությունից եւ որքան կախված՝ իշխանությունից: Անգամ հարկ չեն համարել միջոցառմանը չմասնակցող ԱԺ նախագահի անունը հանել օրակարգից: Ի դեպ, թերեւս պատմության մեջ առաջին անգամ է, որ դատական իշխանության կողմից կամ դատահրավական ոլորտում կազմակերպվում է միջոցառում, որտեղ հրավիրված չեն փաստաբանները: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը չի հրավիրվել ու չի մասնակցել միջոցառմանը: Փաստաբանների պալատից փորձեցինք պարզել՝ ինչու: Ի պատասխան՝ աշխատակազմից միայն հայտնեցին, որ պաշտոնապես հրավեր չեն ստացել: Սա ակնհայտ խտրական վերաբերմունք է, որը երբեք չի դրսեւորվել:



Քաղաքապետարանում Տիգրան Ավինյանի՝ ԱՄՆ շռայլ գործուղման մասով մինչ օրս որեւէ աշխատակից պատասխանատվության չի ենթարկվել: Այսպիսով, դեռ նախորդ տարվա դեկտեմբերին՝ Հայկ Մարությանի հետ բանավեճի ժամանակ, պարզվեց, որ Տիգրան Ավինյանի՝ նոյեմբերին Լոս Անջելես մեկնելու տոմսն արժեցել է 7 միլիոն 650 հազար դրամ: Քաղաքապետի գլխավորած պատվիրակության 9 անդամների համար գնել են էկոնոմ դասի 8 ավիատոմս, իսկ քաղաքապետը բիզնես դասով էր մեկնել ԱՄՆ: Տիգրան Ավինյանը չէր հերքել տեղեկությունը՝ գործակարգավարական նիստի ժամանակ հայտարարելով, որ ԱՄՆ գործուղումից հետո է իմացել արժեքները եւ ապշել է՝ գներն իմանալով: Երեւանի քաղաքապետն այդ ամենում իր աշխատակիցներին էր մեղադրել անպատասխանատվության համար. քաղաքապետը հանձնարարել էր մանրամասն ուսումնասիրել կատարված գնման գործընթացը՝ պարզելու համար, թե ովքեր են պատասխանատու նշված ծախսերի համար, որպեսզի «հետեւանքներ լինեն»: Մինչ օրս, փաստացի, որեւէ «հետեւանք» չի եղել: «Ժողովուրդ» օրաթերթին քաղաքապետարանի լրատվության վարչությունից հայտնեցին, որ դեռ ուսումնասիրություն է ընթանում: Արդարության համար նշենք նաեւ, որ Տիգրան Ավինյանը սեփական միջոցներից փոխհատուցել է իր՝ Ամերիկա գործուղման ավիատոմսերի գումարը, որը կազմել էր 7 միլիոն 650 հազար դրամ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը անտեղյակ է իր կողմից ղեկավարվող ոլորտից: Բանն այն է, որ օրերս լրագրողների հետ զրույցում Հովհաննիսյանը սխալ է ներկայացրել որոշ փաստական տվյալներ ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ: Նախարար Հովհաննիսյանը հարցին, թե խնդիր ունենալո՞ւ է իշխանությունը հարկերի հավաքման հարցում, պատասխանել է. «Երբ մենք 2024 թվականին պլանավորել ենք 2025 թվականի բյուջեն, հիմք ենք ընդունել այն հարկերի մակարդակը, որը հավաքվել է 2024 թվականին: Այսինքն՝ 2024 թվականի վերջը ելակետային թիվ է: 2024 թվականի իրական թվերը եղել են մի փոքր այլ, քան այն, ինչ մենք գրել էինք 2025 թվականի բյուջեն պլանավորելիս: Այս պատճառով որոշակիորեն ճշգրտվելու են այն կանխատեսումները, որոնք մենք ունենք 2025 թվականի հարկային եկամուտների վերաբերյալ: Դեպի ներքեւ կանխատեսումներ են լինելու: Բայց ուրախալի նորություն կա. քանի որ այս ռիսկի կառավարման համար ունենք պահուստային ֆոնդ, ապա բյուջեի կատարման հետ կապված ռիսկեր չունենք»,- ասել է Հովհաննիսյանը: Հարկ է նշել, որ 2025-ին բյուջեի դեֆիցիտը կկազմի 609 մլրդ դրամ, իսկ նախարարն այստեղ խնդիր չի տեսնում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ ՎՏԱՆԳՆԵՐ ԿԱՌԱՋԱՑՆԻ ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ԳԱԶԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ

Հասարակության տարբեր շերտերի կողմից մշտապես քննարկվում է այն հարցը, թե որ երկրից է առավել ճիշտ գազ ներկրել Հայաստանի Հանրապետություն: Այս հարցի վերաբերյալ կան ոչ միանշանակ կարծիքներ: Մարդկանց մի մասի կարծիքով՝ ճիշտ է ՌԴ-ից ներկրել գազ, մյուս մասի կարծիքով՝ Իրանից, իսկ մեկ այլ մասի կարծիքով էլ՝ Ադրբեջանից:

Նշենք, որ ՌԴ-ից ՀՀ ներկրված գազն օգտագործվում է ընդհանուր սպառման, իսկ իրականը՝ ջերմաէլեկտրակայանների աշխատանքի համար:

Հիշեցնենք, որ ՀՀ վարչապետը համաշխարհային հայկական երկրորդ գագաթնաժողովի ժամանակ չէր բացառել, որ Հայաստանն Ադրբեջանից կարող է գազ ներկրել: Սակայն հետաքրքիր է, թե 1000 խմ-ի համար քանի՞ դոլար կարժենա ներկրված գազը: Օրինակ՝ ՌԴ-ից 1000 խմ-ի դիմաց ՀՀ-ն գազը գնում է 165 դոլարով, ինչը շուկայական գնի համեմատությամբ բավականաչափ ցածր գին է:

Պարզելու համար կառաջանա՞ն ինչ-որ վտանգներ Ադրբեջանից գազ ներկրելու դեպքում եւ ինչքանո՞վ ձեռնտու կլինի Ադրբեջանից գազ ներկրելը, ArmLur.am-ը կապ է հաստատել տնտեսագետ Սուրեն Պարսյանի հետ:

-Պարոն Պարսյան, ինչքանո՞վ անվտանգ եւ ձեռնտու կլինի Ադրբեջանից գազամատակարարումը դեպի Հայաստան: Ինչ-որ խնդիրներ կառաջանա՞ն:

-Գազամատակարարումը Հայաստանի համար կարեւոր նշանակություն ունի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք գազի պաշարներ չունենք: Ներկայումս Հայաստանը գազ ստանում է ՌԴ-ից եւ Իրանի Իսլամական Հանրապետությունից, եւ դա թույլ է տալիս ամբողջությամբ ապահովել մեր գազասպառումը: Նշեմ, որ խորհրդային ժամանակաշրջանում Հայաստանը գազ էր ստանում Ղազախխստանով՝ Ադրբեջանից, եւ այդ ժամանակ հիմնական գազամատակարարը հանդիսանում էր Ադրբեջանը: Իրավիճակը փոխվել է վերջին տարիների ընթացքում, հաշվի առնելով այն, որ մենք ունենք իրանական գազամատակարարման հնարավորություն մինչեւ 2 մլդ խորանարդ մետրի չափով: Այս պահին ընդամենը դրա 15 տոկոսն ենք օգտագործում: Ռուսաստանում կառուցվեց նոր գազատար, որը նույնպես ուղղակի գազամատակարարման հնարավորություն էր ստեղծում: Միաժամանակ նշեմ, որ Ադրբեջանի գազի պաշարները այնքան չեն, որ թույլ տան բավարարելու իր ներկա պատվերները: Մի կողմից՝ Ադրբեջանն ունի պայմանագիր եվրամիության երկրների հետ՝ տարեկան մինչեւ 20 մլրդ խորանարդ մետր գազ մատակարարելու: Ինքն այդքան գազ չունի, նույնիսկ վերջերս Սերբիայի նախագահը հայտարարեց, որ նրանք դադարեցրել են գազամատակարարումը Սերբիա: Այսինքն՝ Ադրբեջանն այս պահին չի կարող անգամ իր վերցրած պատվերները կատարել, ուր մնաց՝ նոր պատվերներ ընդունի՝ հաշվի առնելով գազի մատակարարման իր պատճառները: Բացի այդ, նշեմ, որ ադրբեջանական գազը եվրոպական շուկայում անհամեմատ ավելի թանկ գնով է վաճառվում, քան մենք Ռուսաստանից ենք ձեռք բերում: Ադրբեջանն իր գազը եվրոպական շուկայում վաճառում է բորսայական գներով՝ 500 դոլարի շրջանակներում: Այսինքն՝ մենք 2-3 անգամ շատ պետք է վճարենք:

-Այսինքն՝ մեզ ձեռնտու չէ՞:

-Այս պահին իհարկե, ձեռնտու չէ: Եւ ձեռնտու չէ, եւ Ադրբեջանը չունի այդքան գազ, որ մատակարարի:

-Իսկ անվտանգության առումով ինչ-որ խնդիրներ չի՞ առաջացնի միայն այն հանգամանքով, որ Ադրբեջանը թշնամական երկիր է: Օրինակ՝ կլինե՞ն հաճախակի գազի անջատումներ:

-Մենք ժամանակին դրա պատճառով ունեցանք էներգետիկ ճգնաժամ: 90-ական թվականների ադրբեջանական կողմը պարբերաբար պայթեցնում էր Ղազախստանի գազի գիծն ու Հայաստանը զրկվում էր գազամատակարարումից: Այսինքն՝ մենք այդպիսի փորձ ունեցել ենք եւ Ադրբեջանը Հայաստանի համար չի կարող հանդիսանալ միակ գազամատակարար երկիրը կամ գազ ապահովող ենթակառուցվածքը ստեղծող պետությունը: Մենք կարող ենք լավագույն դեպքում ունենալ այլընտրանքային տարբերակներից մեկը: Ենթադրենք՝ լինի ինչ-որ խնդիր, Վրաստանի տարածքով գազամատակարարման խնդիրը առաջանա, գազամատակարարումը որոշակի ժամանակ իրականացնենք Ադրբեջանով: Մյուս պարագաներում ամբողջությամբ մենք չենք կարող հիմնվել այս ուղղության վրա՝ հաշվի առնելով անվտանգային, էներգետիկ եւ բազմաթիվ խնդիրներ: Ուշագրավ է, որ վերջին տարիներին Ռուսաստանը Ադրբեջանի միջոցով ինքն է գազ վաճառում եվրոպական երկրներին՝ հաշվի առնելով այս տնտեսական պատժամիջոցները: Կարող է՝ մի օր այնպիսի դեպք պատահի, որ Ռուսաստանը գազը վաճառի Ադրբեջանին, ու Ադրբեջանն էլ գազը մատակարարի Հայաստանին: Այդպիսի տարբերակ կարող է տեսականորեն լինել: Հետեւաբար այս պահին, հաշվի առնելով անվտանգային եւ այլ գործոններ, քիչ հավանական է, որ մենք գազամատակարարում կունենանք, եւ եթե ունենանք էլ, անշուշտ պետք է հաշվի առնել նաեւ ռուսական կողմի շահերը: Ռուսաստանի հետ մենք ունենք գազամատակարարման պայմանագիր, որը գործում է մինչեւ 2043 թվականը, եւ այդ պայմանագրի համաձայն՝ ռուսական կողմն է Հայաստանի միակ գազամատակարար երկիրը, եւ Հայաստանը, եթե կտրուկ փոփոխություն անի, պետք է նաեւ ռուսական կողմի հետ պայմանագիրը քննարկի: Մենք ունենք պայմանագրային պարտավորություններ:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԵՐԲ Է ԼԻՆԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ԴԱՏԸ

ԻՆՉ ԿՊԱՍՎԻ ՀԱՅ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԻՆԵՐԻՆ

Հայ ռազմաքաղաքական գերիների ճակատագիրը շարունակում է մնալ օդից կախված:

Բաքուն մինչ այս պահը անհեթեթ պատճառաբանություններով հետաձգում էր հայ ռազմաքաղաքական գերիների դատավարությունը, ովքեր, ի դեպ, ապօրինաբար են պահվում Բաքվում:

2025 թվականի հունվարի 17-ին կկայանա Բաքվում ապօրինաբար պահվող Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի եւ պետնախարար Ռուբեն Վարդանյանի դատավարությունը, որի մասին հայտնել են ադրբեջանական լրատվամիջոցները:

Հիշեցնենք, որ Ադրբեջանի գլխավոր դատախազությունը շինծու մեղադրանք է առաջադրել Ադրբեջանի կողմից օկուպացված Արցախի ութ նախկին ռազմաքաղաքական առաջնորդներին, որոնք ապօրինաբար ձերբակալվեցին 2023 թվականի սեպտեմբերին եւ հոկտեմբերին այն բանից հետո, երբ Ադրբեջանը ռազմական հարձակում սկսեց Արցախի դեմ՝ էթնիկ զտման ենթարկելով 120.000 հայի:

Ադրբեջանական այլ լրատվամիջոցների փոխանցմամբ՝ հունվարի 17-ին կայանալիք դատական նիստը լինելու է նախնական, եւ այդ օրը միայն կորոշվի՝ դատավարությունը բաց, թե փակ ձեւաչափով է լինելու:

Նաեւ նշենք, որ Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանին եւ պետնախարար Ռուբեն Վարդանյանին սպառնում է ցմահ ազատազրկում առաջադրված շինծու մեղադրանքների պատճառով:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԵԶՈՆԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՌԻՍԿ ԿԱ

«2023 թվականից մենք արդեն արձանագրել ենք մետապնեւմավիրուսի հետ կապված խնդիրը Հայաստանում. 2024-ին դեպքեր չենք ունեցել, այս տարի դեռեւս չենք արձանագրել դեպքեր Հայաստանում»: Այս մասին ասուլիսի ընթացքում ասաց առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Նախարարի խոսքով՝ իրականացվում է ամենօրյա մոնիթորինգ, թե ինչ իրավիճակ է տարածաշրջանում, Հայաստանում տարածման ինչպիսի ռիսկեր կան:

«Ընդհանուր առմամբ այս պահին թե՛ սուր շնչառական վարակների, թե՛ քովիդի, թե՛ գրիպի առումով ունենք միջին իրավիճակ. այս պահին որեւէ անհանգստացնող խնդիր չունենք»,- նշեց նա:

«Բայց պետք է հասկանանք, որ ընդհանուր առմամբ սեզոնային ակտիվության ավելացման ռիսկ կա»,- ավելացրեց նախարարը:

ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ

Դեռեւս 2023 թ.-ին ձեւավորված Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովը սեպտեմբերից ի վեր նիստ չի արել:

Երեկ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը հայտարարեց, որ մինչեւ հաջորդ ընտրությունները պետք է Սահմանադրության նոր տեքստ մշակել, եւ այս ուղղությամբ աշխատանքներ են ընթանում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հանձնաժողովի անդամ Դանիել Իոաննիսյանը նշեց, որ նախկին նախարար Գրիգոր Մինասյանի հրաժարականից հետո, որն ի պաշտոնե գլխավորել է հանձնաժողովը, նիստ չի կայացել, իսկ նորանշանակ նախարար Սրբուհի Գալյանը դեռ ծանոթանում է կատարված աշխատանքներին:

Հիշեցնենք, որ Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի վերջին նիստը կայացել է սեպտեմբերի 20-ին:

Ամեն դեպքում, Դանիել Իոաննիսյանը փոխանցում է, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ առաջիկայում հանձնաժողովի նիստ հրավիրելու վերաբերյալ:

Չնայած Ադրբեջանական կողմի ամենօրյա պահանջին՝ նախարար Գալյանը վստահեցնում է՝ ո՛չ ուղղակի, ո՛չ անուղղակի կապ սահմանադրության նոր տեքստի եւ այլ երկրների հայտարարությունների հետ չկա եւ չի կարող լինել:

Նոր Սահմանադրության մշակման մեկնարկը տվել է Նիկոլ Փաշինյանը, ով իր ելույթներում բազմիցս տեսակետ է հայտնել, թե երկրին հարկավոր է նոր Սահմանադրություն:

Ըստ Փաշինյանի՝ ՀՀ Սահմանադրությունը մնում է հիմնարար պրոբլեմ մեր երկրի համար:

«ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԼԻՆԵԼՈՒ»

Վրաստանում իշխող «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հայտարարել է, որ ցանկացած քաղաքացի կարող է իր կարծիքն արտահայտել, բայց ոչ ոքի թույլ չի տրվի երկրում հեղափոխություն կազմակերպել:

«Հանգիստ միջավայրում յուրաքանչյուր մարդ կարող է իր կարծիքն արտահայտել, բայց երբ բռնության ես դիմում, երկրում հեղափոխություն, հեղաշրջում կազմակերպելու ցանկություն կա, դա չի ստացվի, ընկերներ»,- լրագրողների հետ հանդիպմանն ասել է Կալաձեն:

Կալաձեի խոսքով՝ «Վրացական երազանքը» հաղթել է 2024 թվականի հոկտեմբերի 26-ին Վրաստանում կայացած խորհրդարանական ընտրություններում: Նա ընդդիմությանը կոչ է արել ընդունել պարտությունը: «Կա պետականություն, եւ հեղափոխություն չի լինի: Կան ընտրություններ, եւ իշխանությունը փոխվում է նրանց օգնությամբ: Դուք պարտվել եք ընտրություններում: Ձեզ հաղթել է վրացի ժողովուրդը: 1. 200 հազար մարդ պաշտպանել է խաղաղությունը եւ ասել է ոչ ֆաշիզմին»,- հավելել է Թբիլիսիի քաղաքապետը:

Քաղաքական գործիչը ընդդիմությանը հիշեցրել է, որ նրա ներկայացուցիչները նույնպես Վրաստանի քաղաքացիներ են, եւ նրանք պետք է ենթարկվեն հանրապետության օրենքներին, հակառակ դեպքում՝ համապատասխան կառույցները միշտ արձագանքելու են նրանց գործողություններին:

Վրաստանի մայրաքաղաքում եւ խոշոր քաղաքներում բողոքի ցույցերը սկսվել են այն բանից հետո, երբ անցած տարվա նոյեմբերի 28-ին վարչապետ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց Եվրամիությանը երկրի անդամակցության շուրջ բանակցություններ սկսելու հարցի քննարկումը մինչեւ 2028 թվականը դադարեցնելու որոշման մասին:

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՀԱՐԹ է ԸՆԹԱՆՈՒՄ

ԱՄՆ պաշտպանության նախարարության ղեկավարությունը կարծում է, որ ԱՄՆ ընտրված նախագահ Դոնալդ Թրամփի թիմին լիազորությունների փոխանցումը հարթ է ընթանում, հայտնել է Պենտագոնի ներկայացուցիչ Պատրիկ Ռայդերը:

«Նախատեսված են հանդիպումներ գերատեսչության ղեկավարության հետ: Մինչ օրս անցումային թիմի հետ ավելի քան 160 հանդիպում է եղել: Մենք նաեւ պատասխանել ենք այս կամ այն տեղեկատվության տրամադրման վերաբերյալ անցումային թիմի ավելի քան 105 հարցման», - նշել է Ռայդերը:

Նա վստահեցրել է, որ հունվարի 20-ին պատրաստ կլինեն լիազորությունների սահուն փոխանցմանը:

ՀԱՐՑԵՐ, ՈՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՄԻԵՐ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԱՀՆ ԱՌԵՂԾՎԱԾ ԷՐ

Հունվարի 13-ին հայտնի դարձավ, որ կյանքից անժամանակ հեռացել է ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանը:

Ինչպես ավելի վաղ հայտնի է դարձել, ՆԳՆ ՓԾ 911 ծառայություն ահազանգ է ստացվել, որ Երեւան-Երասխ-Մեղրի ավտոճանապարհի Տիգրանաշենի ոլորանների հատվածում ավտոմեքենա է ընկել ձորը եւ կա տուժած: Տեղում պարզվել է, որ Hyundai Accord մակնիշի ավտոմեքենան, որն ամբողջությամբ վերածվել էր մետաղե ջարդոնի, մոտ 350-400 մետր գլորվել է ձորը՝ խորքում: Ավտոմեքենայի մեջ փրկարարները հայտնաբերել են Ազգային ժողովի պատգամավոր, «Հայաստան» խմբակցության անդամ Միեր Սահակյանի մարմինը, ում նախորդ օրվանից որոնում էին:

Պատգամավորի գործընկերները ArmLur.am-ի հետ զրույցում պատմել են՝ Սահակյանը օդանավակայան է գնացել, դիմավորել է արտերկրից վերադարձած ծնողներին, տարել տուն, ապա դուրս եկել՝ ասելով, թե գործեր ունի: Դեպքից հետո ArmLur.am-ը փորձում է պարզել առեղծվածային մահվան հանգամանքները՝ հարցուփորձ անելով Միեր Սահակյանին ճանաչողներին:

Հանրագումարի բերելով բոլոր կասկածելի հարցերը՝ առանձնացնում ենք դրանցից կարեւորները:

Ո՞ւր է գնացել Միեր Սահակյանը:

Ո՞ւմ հետ է եղել:

Ինչո՞ւ է հասել Տիգրանաշենի ոլորաններ: Հարազատները նշում են՝ այդ տարածքներում ծանոթ-բարեկամ չունեն:

Ո՞ւմ հետ է խոսել վերջին անգամ, ի՞նչ է ասել:

Կարո՞ղ էր ինչ-որ մեկը նրան այնտեղ հասցնել՝ վնասելու նպատակով:

Հնարավո՞ր է՝ որեւէ ՔՊ-ական կամ ՔՊ-ամերձ քինախնդրություն դրսեւորի, վրեժխնդիր լինի նրանից, որ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ՝ 2023 թվականի մարտի 31-ին, հարվածեց ՔՊ պատգամավոր Վլադիմիր Վարդանյանին: Ինչո՞ւ կա այս հարցը, որովհետեւ ՔՊ-ականները դաժան վրեժխնդիր եղան երիտասարդ Սամվել Վարդանյանից: 2024 թվականի ապրիլի 16-ին նրան մահակներով, զինված դիմակավորված անձինք դաժան ծեծի ենթարկեցին ու խոշտանգեցին, միայն այն բանի համար, որ ավտոբուսում վիրավորել էր ՔՊ-ական (հիմա արդեն նախկին) պատգամավոր Հակոբ Ասլանյանին:

Գուցե եղանակային պայմաններով պայմանավորված՝ մոլորվե՞լ էր 14 տարի այդ մեքենան վարող Միեր Սահակյանը:

Միգուցե ինչ-որ մեկը մեքենան վարել է նրա ուղղությա՞մբ, ինչի պատճառով էլ Սահակյանի ավտոմեքենան գլորվել է ձորը:

Իսկ գուցե իսկապես դժբախտ պատահա՞ր է տեղի ունեցածը, եւ մյուս հարցերը չեն կարող գոյություն ունենալ:

Ամեն դեպքում այժմ պատգամավոր Միեր Սահակյանի ընտանիքը, ընկերները, գործընկերները շոկի մեջ են: Մի ողջ օր փնտրելուց եւ ողբերգական լուրը լսելուց հետո բոլորն ունեն այս հարցերը, իսկ դրանց պատասխանը պետք է տա քննչական կոմիտեն: Ընդ որում՝ շուտափույթ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

Զ. ՓՈՍՏԱՆՋՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ է ԿԻՐԱՌՎԵԼ

Երեկ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում կայացել է «Երկիր Ծիրանի» կուսակցության նախագահ Զարուհի Փոստանջյանի գործով դատական նիստը:

Վերջինիս նկատմամբ դատարանը տուգանք է կիրառել՝ նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի՝ 525 հազար դրամի չափով:

«Դատարանը վճռեց Զարուհի Փոստանջյանին մեղավոր ճանաչել ՀՀ Քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործության կատարման համար եւ նրա նկատմամբ կիրառել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի՝ 525 հազար դրամի չափով»,- հայտնեց դատավոր Տիգրան Ոսկանյանը:

Հիշեցնենք, որ Զարուհի Փոստանջյանը մեղադրվում էր Նիկոլ Փաշինյանին «գործակալ» անվանելու մեջ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՈՒՆԻ

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի հրամանով՝ Լյովա Սարգսյանը նշանակվել է նախարարի խորհրդական: Այս մասին տեղեկացնում են ՀՀ արդարադատության նախարարությունից:

Կենսագրություն

Ծնվել է 1998 թ. նոյեմբերի 25-ին Գյումրիում:

Աշխատանքային գործունեություն

2025 թվականի հունվարի 13-ին ՀՀ արդարադատության նախարարի հրամանով նշանակվել է արդարադատության նախարարի խորհրդական:

2023 թվականի դեկտեմբերի 6-ից հանդիսանում է ՀՀ Փաստաբանների պալատի անդամ:

2023 թվականի նոյեմբերի 1-ից 2025 թվականի հունվարի 3-ը եղել է «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» հիմնադրամի պահանջները քննող մասնագետ-իրավաբան:

2022 թվականի հուլիսի 1-ից 2023 թվականի նոյեմբերի 1-ը եղել է «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» հիմնադրամի պահանջներն ընդունող մասնագետ-իրավաբան:

2021 թվականի հոկտեմբերի 20-ից 2022 թվականի հուլիսի 1-ը եղել է «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» հիմնադրամի մասնագետ-իրավաբան:

Կրթություն

2024թ.-ից առ այսօր սովորում է ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրայում: 2022

2024թթ. սովորել է «ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամում:

2022-2024թթ. սովորել է ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

2016-2022թթ. սովորել է ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

Մասնագիտական զարգացման ծրագրեր

2024 թվականի հոկտեմբերի 24-25-ը Երեւանում մասնակցել է «Financial Ombudsman's Institute Navigating the Future: Crypto Assets and Blockchain» խորագիրը կրող կոնֆերանսին:

2024 թվականի հոկտեմբերին մասնակցել է Հայաստանի բանկերի միության կողմից կազմակերպված 15 ժամ տեւողությամբ «Վարկեր, վարկային վերլուծություն» խորագիրը կրող դասընթացների շարքին:

2024 թվականի սեպտեմբերի 4-ին Երեւանում մասնակցել է «Second Annual Armenian International Arbitration Conference» խորագիրը կրող կոնֆերանսին:

2023 թվականի հոկտեմբերի 23-24-ը Երեւանում մասնակցել է «THE new era of dispute resolution» խորագիրը կրող կոնֆերանսին:

2022 թվականի նոյեմբերի 16-18-ը Լեհաստանում (ք. Վարշավա) մասնակցել «SOLIDARITY ARBITRATION AND MEDIATION DAYS» խորագիրը կրող կոնֆերանսին:

Զինվորական ծառայություն

2017-2019թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: Իրականացրել է մարտական հերթապահություն:

Զինվորական կոչումը՝ սերժանտ:

Այլ տեղեկություններ

Տիրապետում է անգլերեն, ռուսերեն լեզուներին:

Ամուսնացած չէ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐԻ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԴԵՊՔ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության Սյունիքի մարզային վարչությունում ստացված օպերատիվ տվյալների հիման վրա ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել եւ կանխվել է Իրանի Իսլամական Հանրապետությունից մաքսանենգ ճանապարհով Հայաստանի Հանրապետության տարածք առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցներ տեղափոխելու դեպք:

Ազգային անվտանգության ծառայության Սյունիքի մարզային վարչության աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական համալիր միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ երեք քաղաքացիներ ԻԻՀ քաղաքացու հետ, նախնական համաձայնությամբ, միմյանց գործողությունները փոխլրացնելով՝ սույն թվականի հունվարի 10-ին Իրանի Իսլամական Հանրապետությունից մաքսանենգ ճանապարհով, իրացնելու նպատակով ՀՀ են պատրաստվում ներկրել առանձնապես խոշոր չափերի տարատեսակ թմրամիջոցների խմբաքանակ:

Մասնավորապես, սույն թվականի հունվարի 10-ին Մեղրի համայնքի հարակից տարածքում հանցավոր խմբի անդամները նախապես ընտրված թաքստոցից վերցրել են դեռեւս ինքնությունը չպարզված անձի կողմից հայ-իրանական պետական սահմանով մաքսանենգ ճանապարհով ՀՀ ներկրված առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցի խմբաքանակը, որը պատրաստվում էին տեղափոխել Երեւան:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում՝ հանցավոր խմբի գործունեությունը կասեցվել է, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքով ՀՀ քաղաքացիներ Ռ.Ս-ն, Ա.Ա-ն եւ Կ.Ս-ն ձերբակալվել են եւ իրենց ավտոմեքենաներով հանդերձ տեղափոխվել են Ազգային անվտանգության ծառայության Սյունիքի մարզային վարչության վարչական տարածք:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված առերեւույթ հանցանքի մասին հաղորդման եւ կից ներկայացված՝ համապատասխան փաստը հաստատող նյութերի հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության կողմից նախաձեռնված քրեական վարույթով կատարված խուզարկության արդյունքում ավտոմեքենաներից մեկում հայտնաբերվել է 10 կգ թմրամիջոց՝ որից 8 կգ «Մարիխուանա» եւ 2 կգ «Մետամֆետամին» տեսակի:

Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ Ռ.Ս-ի, Ա.Ա-ի եւ Կ.Ս-ի նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ, որոնք բավարարվել են:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ ՔԿ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԶՈՐԱՄԱՍ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ ՈՒ ԼՔԵԼ Է ՀՀ ՏԱՐԱԾՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Յուրիկ Մկոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Ն զորամասի ավագ տեխնիկ, կոչումով կապիտան, կատարել է դասալքություն՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով: 2023 թվականի սեպտեմբերի 25-ին՝ ժամը 08:45-ին, նա չի ներկայացել ծառայության եւ նույն օրը՝ ժամը 15:34-ին «Զվարթնոց» օդանավակայանի սահմանային անցակետով լքել է ՀՀ տարածքը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐՈՒՅԹ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կողմից իրականացված միջոցառումների հիման վրա նախաձեռնված քրեական վարույթով պարզվել է, որ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի /ՍԱՏՄ/ պաշտոնատար անձինք, կենդանիների արտահանման գործընթացում հայտնաբերած խախտումները չարձանագրելու դիմաց, կաշառք են ստացել եւ կատարել պաշտոնեական կեղծիք: Քրեական վարույթի նախաքննությամբ բացահայտվել են նաեւ կոռուպցիոն բնույթի այլ հանցանքներ, այդ թվում՝ 8000 ԱՄՆ դոլար ապօրինի վարձատրություն ստանալու դեպքեր:

Մասնավորպես, պարզվել է, որ Ու. Զ.-ն 2024 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին նախաձեռնել է խոշոր եղջերավոր կենդանիներ արտահանելու գործընթաց, որի շրջանակում, սակայն, ունեցել է էական բացթողումներ: Այսպես՝ նախքան արտահանումը կենդանիների 21-օրյա կարանտինացումը սկսելու եւ դրա նկատմամբ հսկողություն իրականացնելու համար իրավասու պետական մարմնին ներկայացված դիմումում որպես արտահանման քանակ է նշել 580 գլուխ կենդանի, սակայն փաստացի՝ կարանտինացվել է 345 գլուխ: Ընդ որում, կենդանիներից 50-ի վերաբերյալ կարանտինացման կետ կենդանիների տեղափոխման անասնաբուժական Ձեւ 1 վկայականն առկա չի եղել:

ՀՀ ՍԱՏՄ գլխավոր տեսուչներ Շ. Ս.-ն եւ Վ. Գ.-ն 2024 թվականի հոկտեմբերին համապատասխան կարանտինային կետ կատարած այցերից մեկի ընթացքում հայտնաբերել են վերը նշված խախտումները, սակայն դրանք չարձանագրելու դիմաց խմբով Ու. Զ.-ից ստացել են 190.000 ՀՀ դրամ կաշառք: Ավելին՝ Վ. Գ.-ի կողմից կազմվել է կեղծ տեղեկանք առ այն, որ կարանտինացման կետում գտնվում է 574 գլուխ կենդանի եւ առկա է Ձեւ 1 վկայականը: Հիշյալ կեղծ տեղեկանքն այնուհետեւ դրվել է պաշտոնական շրջանառության մեջ, եւ դրա հիման վրա թույլատրվել է կենդանիների խմբաքանակի արտահանումը:

Հետագայում պակասող գլխաքանակի առկայության վերաբերյալ կեղծ բովանդակությամբ տեղեկանք եւ անասնաբուժական Ձեւ 1 վկայական ստանալու համար Ու. Զ.-ն դիմել է Արմավիրի համայնքապետարանի անասնաբույժ Ա. Դ.-ին, ով կաշառքի միջնորդության պատրվակով դրամական միջոց ստանալու համար Ու. Զ.-ին հայտնել է, թե իբր Արմավիրի մարզի տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի հետ ձեռք է բերել պայմանավորվածություն՝ 50.000 ՀՀ դրամ կաշառքի դիմաց տրամադրել պահանջվող կեղծ փաստաթղթերը: Ու. Զ.-ն ընդունել է այդ առաջարկը, որից հետո Ա. Դ.-ն դիմել է իր որդուն՝ անասնաբույժ Գ. Դ.-ին, Ձեւ 1 վկայական տրամադրելու համար: Որդու կազմած կեղծ փաստաթուղթը Ա. Դ.-ն փոխանցել է Ու. Զ.- ին եւ նրանից ստացել պահանջած 50.000 ՀՀ դրամը, որը որեւէ պաշտոնատար անձի չի փոխանցել, այլ տնօրինել է անձամբ:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Դատախազի կողմից հաստատվել է մեղադրական եզրակացությունը, եւ վարույթի նյութերն ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննելու համար:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԵՐԵՎԱՆՈՒՄ՝ 3881, ՄԱՐԶԵՐՈՒՄ՝ 11.098 ԽԱԽՏՈՒՄ

ՀՀ մայրաքաղաքում հունվարի 7-ից 13-ն իրականացված ծառայության ընթացքում Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 3 881 խախտում՝ պահպանվող հատուկ տարածք տեղափոխելով 176 մեքենա:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանությունից, հայտնաբերվել է ոչ սթափ վիճակում մեքենա վարող 125, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 287 անձ: Հայտնաբերվել են հաշվառման համարանիշի հետ կապված՝ 32, չամրակապված վարելու՝ 844, վարելիս ծխախոտային արտադրատեսակ օգտագործելու՝ 250, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 97, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 92 եւ 1372 այլ իրավախախտումներ: 163 մեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 315-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 59-ը՝ արտաքին լուսային սարքերի անսարքությամբ, 862-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: Բացի այդ, տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու բաժիններ է տարվել 139 անձ:

Ըստ աղբյուրի՝ նույն ժամանակահատվածում մարզերում պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 11 098 խախտում՝ պահպանվող հատուկ տարածքներ տեղափոխելով 218 տրանսպորտային միջոց: Հայտնաբերվել է ոչ սթափ վիճակում մեքենա վարող՝ 177, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 544 անձ: Հայտնաբերվել են հաշվառման համարանիշի հետ կապված՝ 54, չամրակապված վարելու՝2487, վարելիս ծխախոտային արտադրատեսակ օգտագործելու՝ 243, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 405, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝21, արագության գերազանցման՝ 1188 եւ 3199 այլ իրավախախտումներ: 349 մեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 1590-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 498-ը՝ արտաքին լուսային սարքերի անսարքությամբ, որից 32-ը՝ բեռնատարներ, 187-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: Բացի այդ, տարբեր կասկածանքով ձերբակալվել ու բաժիններ է տարվել 43 անձ:

ՁԿՆԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

Հունվարի 10-ին եւ 11-ին ՆԳՆ ոստիկանության, Բնապահպանության եւ ընդերքի տեսաչական մարմնի եւ շրջակա միջավայրի նախարարության Սեւանի տեղամասի էկոպարեկային ծառայության աշխատակիցների հետ համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում հայտնաբերվել են ձկնագողության դեպքեր: Այս մասին հայտնում են ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից:

Բոլոր դեպքերով կազմված փաստաթղթերը նեյկայացվել են քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 10-ից 14-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 321 դեպք, որից 18-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԴՊԵՍ ԷԼ ՉԻ ՀԱՆՁՆՎԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հունվարի 11-ին այցելել է Տավուշի մարզի Գանձաքարի նորակառույց միջնակարգ դպրոց, շրջել դպրոցում, ծանոթացել ստեղծված պայմաններին: Կառավարության մամուլի ծառայությունը հայտնում է. «Դպրոցը կառուցվել է ՀՀ Կառավարության եւ Ասիական զարգացման բանկի համաֆինանսավորմամբ, Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 2 մլրդ 58 մլն դրամ: Ծրագրի իրականացման արդյունքում կառուցվել է 480 աշակերտի համար նախատեսված ավագ դպրոց: Դպրոցի շինարարությունը մեկնարկել է 2021 թվականի օգոստոսին, ավարտվել 2024-ի նոյեմբերին»: Ինչպե՞ս է դպրոցի շինարարությունը նոյեմբերին ավարտվել, եթե շենքը մինչեւ 2024 թվականի վերջ շահագործման չի հանձնվել, անցած տարի այնտեղ դասեր չեն կայացել: Շինարարությունն իրականացրել է Էրեբունու նախկին թաղապետ, ԱԺ նախկին պատգամավոր Մհեր Սեդրակյանի որդու՝ Դավիթ Սեդրակյանի «Բիդեք» ընկերությունը: Դպրոցի շենքը պետք է շահագործման հանձնվեր դեռ 2023 թվականի ամռանը, շահագործման ժամկետը մեկուկես տարի ուշացել է: 2021թվականի սեպտեմբերից՝ ավելի քան 3 տարի, Գանձաքարի միջնակարգ դպրոցի 465 աշակերտները դասեր են արել գյուղի մշակույթի տանը եւ փոստային բաժանմունքի շենքի 2-րդ հարկում՝ մասնավոր անձին պատկանող տարածքում, հարմարեցված դասասենյակներում: Փոստային բաժանմունքի շենքի 2-րդ հարկի տարածքի համար Գանձաքարի դպրոցը մասնավոր անձին ամեն ամիս վճարել է 150 հազար դրամ: Դպրոցի շինարարության համար սկզբում նախատեսվում էր հատկացնել 1 միլիարդ 882 միլիոն դրամ:

ՄԱՐԶՊԵՏԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Տավուշի նախկին մարզպետները մարզի համայնքներում քաղաքացիների ընդունելություն էին կատարում, ըստ հնարավորի՝ աջակցում քաղաքացիներին հուզող խնդիրների լուծմանը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը համայնքներում քաղաքացիների ընդունելություն չի կատարում: Նրան հարցում ենք արել 2025 թվականին. «որպես մարզպետ՝նախատեսո՞ւմ եք մարզի համայնքներում՝ Բերդում, Նոյեմբերյանում, Դիլիջանում քաղաքացիների ընդունելություն կատարել, եթե այո, ապա ի՞նչ ժամանակացույցով եք ընդունելություն կատարելու»: Մարզպետարանից պատասխանել են. «2025 թվականին նախատեսվել է ընդունելություն մարզի բոլոր համայնքներում՝ ըստ անհրաժեշտության»: Ըստ անհրաժեշտությանը ո՞րն է, մարզի համայնքների բնակիչներից բազմաթիվ դժգոհություններ ենք ստացել, որ մարզպետ Ղալումյանը իրենց համայնքում քաղաքացիների ընդունելություն չի կատարում, մարզկենտրոն Իջեւան հասնելու դեպքում ոչ մի երաշխիք չկա, որ այդ օրը մարզպետը աշխատավայրում կլինի կամ իրենց կընդունի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՀ-ԱԴՐԲԵՋԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐԵՎՈՐ Է ԽՈՒՍԱՓԵԼ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻՑ

Կարեւոր է, որպեսզի Հայաստանն ու Ադրբեջանը բարի կամքով բանակցեն չլուծված բոլոր հարցերի շուրջ՝ խուսափելով սուր հռետորաբանությունից եւ ուժի կիրառման սպառնալիքներից: Քրյուսելում այս մասին ասել է ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության հարցերով գլխավոր խոսնակ Անիտա Հիպերը:

ԵՄ գլխավոր խոսնակը վերահաստատել է ԵՄ պատրաստակամությունը՝ աջակցելու կողմերին տարածաշրջանում կայուն խաղաղության հասնելու համար: Անիտա Հիպերը շեշտել է՝կողմերին խրախուսում են շարունակել իրենց երկխոսությունը եւ գտնել փոխադարձ ընդունելի լուծումներ, որոնք կբավարարեն նրանց համապատասխան մտահոգությունները:

-Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի վերջին հայտարարությունները ոչ միայն սպառնալիք են ներկայացնում Հայաստան-Ադրբեջան սահմանին ԵՄ մոնիթորինգային առաքելությանը, այլեւ մարտահրավեր են նետում Եվրոպական միության հիմնարար սկզբունքներին եւ անվտանգությանն առհասարակ: Ինչպե՞ս է ԵՄ-ն պատրաստվում արձագանքել այսպիսի սադրանքներին եւ ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվելու տարածաշրջանային կայունությունն ապահովելու եւ ԵՄ-ի հիմնարար արժեքները պաշտպանելու համար:

-ԵՄ-ն մշտապես կոչ է անում կողմերին զերծ մնալ այնպիսի քայլերից, որոնք կարող են վնաս հասցնել խաղաղության գործընթացին: Մասնավորապես, մենք մեծապես կարեւորում ենք խուսափումը սուր հռետորաբանությունից եւ կողմերին խրախուսում ենք աշխատել փոխադարձ ընդունելի լուծումների ուղղությամբ՝ տարածաշրջանի բոլոր ժողովուրդների համար կայուն եւ խաղաղ ապագայի ստեղծման նպատակով:

ԵՄ-ն շարունակում է իր ակտիվ ներգրավվածությունը երկու կողմերի հետ, ներառյալ՝ կարգավորման գործընթացի վերաբերյալ խորհրդակցությունները, ինչպես նաեւ նախորդ տարվա դրական զարգացումները երկկողմ համագործակցության ոլորտում: Մենք խրախուսում ենք կողմերին շարունակել իրենց երկխոսությունը եւ գտնել փոխադարձ ընդունելի լուծումներ, որոնք կբավարարեն նրանց համապատասխան մտահոգությունները: Այս ուղերձը վերջերս կրկնվել է ԵՄ հատուկ ներկայացուցիչ Գրոնոյի կողմից՝ Բաքու եւ Երեւան այցերի ընթացքում, որտեղ նա հանդիպել է երկու երկրների ղեկավարության հետ: Նույն ուղերձը վերահաստատվել է Եվրոպական խորհրդի նախագահ Կոստայի կողմից՝2025թ. հունվարի 9-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ:

-Ադրբեջանի շարունակական ագրեսիան Հայաստանի դեմ եւ Լեռնային Ղարաբաղի բնիկ բնակչության տեղահանությունը լուրջ մտահոգություններ են առաջացնում մարդու իրավունքների եւ տարածքային ամբողջականության առումով: Ի՞նչ գործնական քայլեր է ԵՄ-ն պատրաստվում ձեռնարկել Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու եւ այս խախտումներին արձագանքելու ուղղությամբ:

-ԵՄ-ն վերջին տարիներին աջակցում է երկու կողմերին կարգավորման գործընթացում՝ ներառյալ տեղահանված բնակչության հետ կապված խնդիրների լուծման հարցում: Մենք կրկին կոչ ենք անում կողմերին բարի կամքով բանակցել չլուծված բոլոր հարցերի շուրջ եւ երկու կողմերի հետ էլ շարունակելու ենք մեր երկխոսությունը այս հարցերի վերաբերյալ:

-Ալիեւի հայտարարությունները խարխլում են ԵՄ-ի վստահելիությունը որպես միջնորդ Հարավային Կովկասում եւ սպառնում են Հայաստանի ընտրած ժողովրդավարական ուղուն: Ինչպե՞ս է ԵՄ-ն պատրաստվում պահպանել իր դերը որպես արդար եւ արդյունավետ միջնորդ, եւ արդյոք կլինե՞ն շոշափելի հետեւանքներ Ադրբեջանի գործողությունների եւ հռետորաբանության համար:

ԵՄ-ն կրկին ընդգծում է, որ կարեւոր է, որպեսզի կողմերը բարի կամքով բանակցեն չլուծված բոլոր հարցերի շուրջ՝ խուսափելով սուր հռետորաբանությունից եւ ուժի կիրառման սպառնալիքներից:

Մենք ողջունում ենք բոլոր ջանքերը՝ ուղղված Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղության հաստատմանը: Բացի միջազգային այլ ջանքերից, «Բրյուսելի գործընթացը» 2021-2023 թվականներին հնարավորություն տվեց երկու կողմերի առաջնորդներին ակտիվորեն ներգրավվել քննարկումներում հիմնական հարցերի շուրջ: Սա ապահովեց կառուցվածքային շրջանակ եւ անհրաժեշտ տարածք՝կարգավորման գործընթացը առաջ տանելու համար, ինչը գնահատվել է երկու կողմերի կողմից:

ԵՄ-ն մեծապես ողջունում է դրական առաջընթացը, որը տեղի ունեցավ հետագայում երկկողմ հարաբերությունների ուղղությամբ եւ հույս ունի, որ 2025 թվականը կբերի ավելի դրական արդյունքներ՝ի շահ տարածաշրջանի ամբողջ բնակչության: ԵՄ-ն պատրաստակամ է լրացուցիչ աջակցություն ցուցաբերել երկու կողմերին էլ:

ՀԵՐՔՈՒՄ

ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԼՈՒՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի մարտի 30-ին «Ժողովուրդ» օրաթերթի կողմից հրապարակվել է «Նոր մանրամասներ ավտոբուսների ձեռքբերման գործով. ինչ է կատարվել» վերտառությամբ հոդվածը: «Ըստ իրավապահ համակարգի մեր աղբյուրների՝ մրցույթը չեղարկվել էր Հրաչյա Սարգսյանի անմիջական հրահանգով: Ավելին՝ Հրաչյա Սարգսյանը այդ ժամանակ Մետրոպոլիտենի տնօրենների խորհրդի նախագահ է նշանակում իր մտերիմ Հայկ Հովհաննիսյանին, որը կապի է դուրս գալիս չինական ընկերության հետ ու լծվում Երեւանի տրանսպորտային համակարգը համալրելու «հայրենանվեր» գործին:

«Հայրենանվիրությունը» կատարյալ չէր լինի, եթե հանրությանը մատուցած իրենց ծառայությունների համար պաշտոնյաները կանխավ իրենց «պարգեւատրումը չկազմակերպեին»: Այդ «պարգեւատրումը» կազմակերպվել է արտարժույթի տատանումից օգտվելու միջոցով: 150 ավտոբուսներից յուրաքանչյուրի համար վճարվել է 44.249.499 ՀՀ դրամ: Հասկանալի է, որ չինացիներին ոչ թե հայկական դրամ է վճարվել, այլ ԱՄՆ դոլար: 2021 թվականին յուրաքանչյուր ավտոբուսի գինը կազմել էր շուրջ 86 հազար ԱՄՆ դոլար՝հաշվարկված 518 դրամ 1 դոլարի դիմաց կուրսով: 2022 թվականին, երբ 1 դոլարի փոխարժեքը հավասար է եղել 405 դրամի, պայմանագրով նույն ավտոբուսի գինը կազմել է շուրջ 109 հազար ԱՄՆ դոլար: Չեղարկված մրցույթի հետեւանքով եւ նույն պայմաններով նոր մրցույթի անցկացման արդյունքում յուրաքանչյուր ավտոբուսի գինն ավելացել է ավելի քան 22 հազար ԱՄՆ դոլարով:

Ընդհանուր առմամբ 150 ավտոբուսները 2022 թվականին գնվել են մոտ 3.4 միլիոն ԱՄՆ դոլարից ավելի գումարով: Կարող է տպավորություն ստեղծվել, որ չինական ընկերությունը վերը նշված գումարի չափով թանկացրել էր իր ապրանքը, սակայն դա այդպես չէ: Պարզվում է՝ գնումը իրականացվել է Zhongtong Bus ընկերությունից, իսկ փոխանցումը կատարվել է վերջինիս դուստր՝Beijing Strong Company ընկերությունից միջնորդ օֆշորային կազմակերպությանը, որը ստեղծվել է Արաբական Միացյալ Էմիրություններում հենց այդ նպատակով:

Ըստ իրավապահ աղբյուրներից ստացած տեղեկության՝ առաջացած «միջնորդավճարը» կազմել է 30 տոկոս, որի մի մասը ստացվել է Դուբայում, իսկ տեղում գործերը «կարգի է բերել» վերը հիշատակված Հայկ Հովհաննիսյանը նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի՝ Դուբայում ապրող եղբոր հետ»:

Նկատի ունենալով, որ նշված տեղեկությունները ստացվել են չճշտված աղբյուրից, ուստի վերը նշված տեղեկությունները ՀԵՐՔՈՒՄ ԵՆՔ:

● *Անցած 4 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 54 պատահար. 1 մարդ զոհվել է, 81-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ի՞ՆՉ ԱՐԺԵՆ ԴԵՊԻ ՇԱՐՄ ԷԼ ՇԵՅԽ ԱՎԻԱՏՈՄՍԵՐԸ

Շարմ էլ Շեյխը եգիպտական զբոսաշրջային քաղաք է, որը գտնվում է Սինայի թերակղզու հարավում՝ Կարմիր ծովի ափին: Շատ կարճ ժամանակում այս վայրը հասցրել է սիրվել հայերի կողմից: Վերջին շրջանում շատերը նախընտրում են հանգստի մեկնել հենց Շարմ էլ Շեյխ:

«Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվել է, թե ի՞նչ արժեն ավիատոմսերը դեպի Շարմ էլ Շեյխ:

Այսպիսով՝ հունվարի 15-ին Onetwotrip.com-ում 41 ժամ 30 րոպե թռիչքի արժեքը 66 հազար 470 դրամ է, նույն կայքում կարող եք գտնել նաեւ 34 ժամ 5 րոպե տեւողությամբ թռիչք, որի արժեքը 70 հազար դրամ է:

Kiwi.com-ում 21 ժամ 55 րոպե թռիչքը արժե 72 հազար դրամ:

Հունվարի 16-ին Mytrip.com-ում կգտնեք ուղիղ թռիչք դեպի Շարմ էլ Շեյխ, թռիչքի տեւողությունը՝ 3 ժամ 10 րոպե, արժեքը՝ 78 հազար դրամ:

WizzAir-ի միջոցով 21 ժամ 10 րոպե թռիչքը արժե 92 հազար դրամ, 26 ժամ 10 րոպեն 97 հազար դրամ, 17 ժամ 50 րոպեն 100 հազար դրամ է:

Հունվարի 17-ին Kiwi.com-ում 18 ժամ 45 րոպե թռիչը արժե 82 հազար դրամ: Onetwotrip.com-ում 37 ժամ 35 րոպե թռիչքը 89 հազար դրամ է, 22 ժամ 45 րոպեն՝ 94 հազար դրամ:

Հունվարի 18-ին նույն ավիաընկերության 23 ժամ 50 րոպե թռիչքն արժե 70 հազար դրամ, 20 ժամ 5 րոպե թռիչքը՝ 73 հազար դրամ, իսկ 21 ժամ 15 րոպեի արժեքը 81 հազար դրամ է:

Հունվարի 19-ին Mytrip.com-ում 12 ժամ 50 րոպե թռիչքը 38 հազար 320 դրամ է, Kiwi.com-ում 20 ժամ 45 րոպե թռիչքի արժեքը՝ 76 հազար դրամ: FlyOne ավիաընկերությունում 30 ժամ 55 րոպե թռիչքը 104 հազար դրամ է:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԻՋԵԼ Է

Սեւանա լճի մակարդակը 2025 թվականի հունվարի 6-12-ն ընկած ժամանակահատվածում իջել է 1 սմ-ով եւ կազմել 1900.37 մ (12.01.25թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 22 սմ-ով, իսկ 2025 թվականի հունվարի 1-ի մակարդակից ցածր է 2 սմ-ով:

Արփա-Սեւան ջրատարով 2025 թվականի հունվարի 6-12-ն ընկած ժամանակահատվածում Սեւանա լիճ տեղափոխված ջրի քանակը կազմել է 0.434 մլն.մա, իսկ 2025 թվականի հունվարի 1-ից հունվարի 12-ը ներառյալ՝ 0.744 մլն.մա:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Վահագն Դավթի Զաքարյանս, անհայտ պայմաններում կորցրել եմ 30.05.2008 թվականին Երեւանի պետական համալսարանի կողմից տրված թիվ AD 060210 դիպլոմը եւ հավելվածը:

Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 96 000 906 հեռախոսահամարով:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»

ՆԵՐԳՐԱՎՎԵԼ Է 200 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿ

«Ամերիաբանկը» 200 մլն ԱՄՆ դոլարի երկարաժամկետ վարկային պայմանագիր է ստորագրել Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) հետ՝ կլիմայական ֆինանսավորման նախաձեռնություններին, միկրո, փոքր եւ միջին ձեռնարկություններին (ՄՓՄՁ) եւ կանանց պատկանող ՓՄՁ-ներին աջակցելու նպատակով:

Կնքված համաձայնագիրը, որը IFC-ի եւ Հայաստանում գործող ֆինանսական հաստատության միջեւ երբեւէ ստորագրված ամենախոշոր գործարքն է, նշանակալի իրադարձություն է Հայաստանում կանաչ տնտեսության անցման, կլիմայի փոփոխությունների հետեւանքների նկատմամբ դիմադրողականության բարձրացման եւ կլիմայի առնչությամբ ազգային եւ միջազգային նպատակներին համապատասխան գործելու տեսանկյունից: Ներգրավված միջոցների կեսը հատկացվելու է կլիմայական ֆինանսավորման նախագծերին, մեկ քառորդը՝ ՄՓՄՁ-ներին, եւս մեկ քառորդ՝ կանանց կողմից ղեկավարվող ՓՄՁ-ներին:

Այս գործընկերությունը եւ գործարքն արտացոլում են ՀՀ-ում ամենախոշոր վարկային պորտֆելն ունեցող «Ամերիաբանկի» հանձնառությունը՝ խթանելու կայուն զարգացումը եւ առաջնորդելու ժամանակակից փոխակերպումները:

Ակնկալվում է, որ առաջիկա տարիներին այս ներդրման շնորհիվ կստեղծվեն հազարավոր աշխատատեղեր եւ էապես կնվազեցվեն ջերմոցային գազերի տարեկան արտանետումները՝ մոտ 40,000 տոննա ածխաթթու գազին (CO2) համարժեք:

«Ամերիաբանկի» տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանն ասաց. «Երկարաժամկետ վարկային այս համաձայնագիրը Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) եւ Հայաստանում ֆինանսական հաստատության միջեւ երբեւէ ստորագրված խոշորագույն գործարքն է: Այն առանձնանում է ոչ միայն իր ծավալով, այլեւ նպատակով, այն է՝ աջակցել բիզնես նախաձեռնություններին եւ ծառայություններին, որոնք դիմակայում են կլիմայի փոփոխությամբ պայմանավորված մարտահրավերներին, ընդլայնում են կին ձեռներեցների հնարավորությունները ու նպաստում Հայաստանի կայուն ապագայի ձեւավորմանը»:

Նա ավելացրեց. «Մեծապես գնահատում ենք Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) հետ մեր տասնամյա համագործակցությունը եւ Հայաստանում բիզնեսների եւ մարդկանց համար հնարավորություններ ստեղծելու մեր ընդհանուր հանձնառությունը»:

IFC-ն նպատակ ունի վերացնելու ենթակառուցվածքների բացերը Հայաստանում եւ նվազեցնել ածխածնի հետքը՝ էլեկտրաէներգիայի վերականգնվող աղբյուրներում եւ կլիմայական փոփոխություններին ադապտացման ուղղությամբ ներդրումներ կատարելու միջոցով: Բացի այդ, IFC-ն աշխատանքներ է կատարում ՄՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիությունը բարելավելու ուղղությամբ եւ ֆինանսական հաստատությունների հետ համատեղ աջակցում է ավելի կանաչ տնտեսության զարգացմանը:

«Այս գործընկերությունը կայուն զարգացմանն ուղղված մասնավոր ներդրումները խթանելու IFC-ի ռազմավարության մասն է կազմում», - ասաց Մարսելո Կաստելյանոսը՝ Եվրոպայում ֆինանսական հաստատությունների խմբի IFC-ի տարածաշրջանային ավագ ղեկավարը: «Կլիմայական ֆինանսավորման առաջատար «Ամերիաբանկն» այս նպատակներն առաջխաղացնելու իմաստով ռազմավարական գործընկեր է հանդիսանում: Երկարաժամկետ ֆինանսավորում տրամադրելով՝ նպատակ ունենք ցուցադրել կլիմայական ֆինանսական պրոդուկտների կենսունակությունը եւ խթանել դրանց տարածումը եւ մասշտաբավորումը Հայաստանի ֆինանսական հատվածում»:

Հանդիսանալով Հայաստանի տնտեսության ամենախոշոր վարկատուն՝ «Ամերիաբանկն» ունի 1.1 տրիլիոն ՀՀ դրամի ընդհանուր համախառն վարկային պորտֆել, որի կազմում ՓՄՁ-ներին բաժին ընկնող համախառն պորտֆելը 2024թ. սեպտեմբերին կազմել է 252 մլրդ ՀՀ դրամ՝ գրանցելով տպավորիչ 25% աճ նախորդ տարվա համեմատ եւ 21.6% եռամյա համակցված տարեկան աճի տեմպ (CAGR): Վերջին երեք տարվա ընթացքում «Ամերիաբանկի» ՓՄՁ հաճախորդների թիվն աճել է 45%-ով եւ այս պահին կազմում է շուկայի 25%-ը:

2009թ.-ից ի վեր բանկը միջազգային ֆինանսական հաստատությունների եւ խոշոր ներդրողների աջակցությամբ էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգիայի նախագծերի ֆինանսավորմանն է ուղղել ավելի քան 250 մլն ԱՄՆ դոլար: Մինչ օրս «Ամերիաբանկը» տարբեր միջազգային ֆինանսական հաստատություններից ներգրավել է 1.4 մլրդ ԱՄՆ դոլարի ֆինանսավորում եւ այդ միջոցներն ուղղել է Հայաստանի համար կենսական կարեւորություն ունեցող տնտեսական ոլորտների զարգացմանը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» Գ

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ՝ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ

«Հայէկոնոմբանկն» առաջարկում է աշխատավարձային վարկային գիծ այժմ առավել հեշտ եւ արագ եղանակով:

«Հայէկոնոմբանկի» աշխատավարձային քարտ ունեցող հաճախորդները AEB Mobile հավելվածով կարող են դիմել եւ ստանալ աշխատավարձային վարկային գիծ հաշված րոպեների ընթացքում հետեւյալ պայմաններով.

Վարկի գումար՝ 50,000 -1,500,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի ամսական չհարկված եկամտի վեցապատիկից

Վարկային գծի ժամկետ՝ 12-36 ամիս

Տարեկան տոկոսադրույք՝ 16%

Փաստացի տոկոսադրույք՝ 17.23%

Իսկ բանկի մասնաճյուղերում կամ գլխամասային գրասենյակում հաճախորդներն աշխատավարձային վարկային գիծ կարող են ստանալ հետեւյալ պայմաններով.

Վարկի գումար՝ 50,000 - 4,000,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի ամսական չհարկված եկամտի տասնապատիկից

Վարկային գծի ժամկետ՝ 12-48 ամիս

Տարեկան տոկոսադրույք՝ 17%

Փաստացի տոկոսադրույք՝ 18.39%

Աշխատավարձային վարկային գծի կոմիսիոն վճար եւ ամսական սպասարկման վճար չի սահմանվում:

AEB Mobile հավելվածում այժմ հնարավոր է գրանցվել առանց բանկ այցելելու՝ կենսաչափական նույնականացմամբ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՁՄԵՌԱՅԻՆ ԽԱՂԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՄԱՄՆԱԿՑՈՒՄ Է 9 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ հունվարի 13-23-ն Իտալիայի Թուրին քաղաքում մասնակցում է Համաշխարհային ուսանողական ձմեռային խաղերին:

ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկված են 9 մարզիկներ, որոնք հանդես կգան գեղասահք, սնոուբորդ, լեռնադահուկային սպորտ, դահուկավազք եւ պարադահուկավազք մարզաձեւերում: Պատվիրակության ղեկավարը Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի նախագահ Հովհաննես Գաբրիելյանն է: Պատվիրակության կազմում ընդգրկված են նաեւ մարզիկների անձնական մարզիչներն ու Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիայի նախագահ Գագիկ Սարգսյանը:

Գեղասահքի անհատական պայքարում հանդես կգա Պյոտր Չիտիպախովյան, պարային զույգերի պայքարում՝ Կրիստինա Դոբրոսերդովա-Ալեսանդրո Բորտելո Պելեգրինի զույգը, լեռնադահուկային սպորտի մրցումներում Հայաստանը կներկայացնեն Հարություն Հարությունյանը եւ Ժիրայր Առաքելյանը, սնոուբորդում՝ Նորիկ Թադեւոսյանը եւ Դավիթ Հովհաննիսյանը, դահուկավազքում՝ Սպարտակ Ոսկանյանը, իսկ պարադահուկավազքում՝ Գարիկ Մելքոնյանը:

Համաշխարհային ուսանողական ձմեռային խաղերին այս տարի շուրջ 55 երկրի 3000 պատվիրակներ են մասնակցում:

Հունվարի 13-ին Տորինոյի «Ինալպի» արենայում կայացել է խաղերի բացման պաշտոնական արարողությունը:

Հայաստանի դրոշակակիրներն են եղել սնոուբորդիստ Նորիկ Թադեւոսյանն ու պարադահուկավազորդ Գարիկ Մելքոնյանը:

Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի նախագահ Հովհաննես Գաբրիելյանի գնահատմամբ՝ ձմեռային սպորտային խաղերին մասնակցելը պատվաբեր է. «Ձմեռային Օլիմպիական խաղերից հետո Համաշխարհային ուսանողական ձմեռային խաղերը կարելի է համարել երկրորդ ամենամեծ միջոցառումը թե՛ պատվիրակությունների, թե՛ մարզաձեւերի քանակով: Ներկայացուցչական տեսանկյունից եւս սա շատ կարեւոր միջոցառում է: Ձմեռային սպորտային երկրների ցանկում լինելը Հայաստանի համար պատվաբեր է, ուսանողական սպորտի համար եւս ձմեռային ձեւերին մասնակցությունն արժեքավոր է»:

Հայաստանի ներկայացուցիչներից առաջինը պայքարի դուրս կգա պարադահուկավազորդ Գարիկ Մելքոնյանը. նրա մրցելույթը նախատեսված է այսօր՝ հունվարի 15-ին: Հունվարի 16-ից էլ պայքարը կսկսեն գեղասահորդները:

Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիան, հանդիսանալով Համալսարանական սպորտի միջազգային ֆեդերացիայի լիիրավ անդամ, 1995 թվականից մասնակցում է Համաշխարհային ուսանողական ձմեռային եւ ամառային խաղերին (նախկինում՝ Ունիվերսիադաներ):

ՀՀ ԿԳՄՄՆ Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՄԱՐԶԱԿԱՆ

ԻԲԲԱՀԻՄՈՎԻՉԸ ՏԵՂԱՓՈԽՎԵՑ «ԼԱՑԻՈ»

19-ամյա գերմանացի կիսապաշտպան Արիյոն Իբրահիմովիչը Մյունխենի «Բավարիայից» տեղափոխվեց իտալական «Լացիոն» կես տարվա վարձակալությամբ, հաղորդում է գերմանական ակումբի կայքը: Ամռանը «Լացիոն» հնարավորություն կունենա ձեռք բերելու նրա տրանսֆերային իրավունքը:

Արիյոն Իբրահիմովիչը հռոմեական ակումբում հանդես կգա 27 համարի խաղաշապիկով:

Իբրահիմովիչի տրանսֆերային արժեքը գնահատվում է 4 միլիոն եվրո:

ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ԲՈՒԺԶՆՆՈՒՄ Է ԱՆՑԵԼ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը բուժզննում է անցել: Այս մասին հայտնել է «Ինտերի» մամուլի ծառայությունը:

Բուժզննման արդյունքում ոչ մի լուրջ խնդիր չի հայտնաբերվել:

Մխիթարյանը ձախ ազդրի մկանային խնդիր ունի, սակայն ամենօրյա վերահսկողության տակ կլինի:

ԱԲ-Ի ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԾԱՌՈՒԿՅԱՆ-ՄԱԽԱՉԵՎ ՄԵՆԱՄԱՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Google-ի Gemini արհեստական բանականությունը կանխատեսել է UFC 311-ի գլխավոր մենամարտի հնարավոր մի քանի սցենարները, որտեղ կմենամարտեն թեթեւ քաշային կարգի դասակարգման առաջին համար Արման Ծառուկյանն ու նույն քաշային կարգի գործող չեմպիոն Իսլամ Մախաչեւը:

Sportskeeda-ն խնդրել էր կանխատեսել ԱԲ-ին՝ իրադարձության վերլուծությանը ավելացնելով 3 հիմնական գործոն՝ Մախաչեւի գերակայությունը (ներառյալ նրա բոլոր բնորոշ հմտությունները), Ծառուկյանի էվոլյուցիան (հարվածային տեխնիկայի զարգացումը Մախաչեւի հետ առաջին մենամարտից ի վեր), (զարգացում եւ կռվի ռեւանշիստական բնույթը):

AI-ն առաջարկել է մենամարտի ելքի 3 տարբերակ. ամենահավանական արդյունքն այն է, որ Իսլամը կհաղթի մրցավարների որոշմամբ: Չնայած Արմանի զարգացմանը, Մախաչեւը շարունակում է մնալ լավագույն թեթեւ քաշայինը եւ ֆավորիտ է այս դիմակայությունում:

Երկրորդ տարբերակը Ծառուկյանի հաղթանակն է: Նշվում է, որ հաղթանակ հնարավոր է, եթե Արմանը մենամարտը «ոտքի վրա» պահի եւ ստիպի Մախաչեւին ավելի շատ աշխատել հարվածային տեխնիկայով:

Վերջին տարբերակն այն է, որ մարտիկներից մեկը հաղթի խեղդամահով, քանի որ երկուսն էլ հմուտ են գրեփինգում:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՄԵԴԱԼԻ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ»՝ ՓԱՐԻԶՈՒՄ ⇨

Դերասանուհի Աննա Մաքսիմն իր սոցիալական էջում տեսանյութ է հրապարակել, որից տեղեկանում ենք՝ տեղի է ունեցել «Մեդալի հակառակ կողմը» ֆիլմի փարիզյան պրեմիերան:

Հրապարակմանը կից նա գրել է. «Փարիզյան պրեմիերան ջերմ էր ու սիրառատ, հայերիս սիրտը՝ կարոտով լի»:

Նշենք, որ ֆիլմը պատմում է անվանի հայ ծանրորդ, աշխարհի եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն Նազիկ Ավդալյանի կյանքի եւ սպորտային կարիերայի մասին:

Դերասանական կազմում ներգրավված են հայտնի արտիստներ՝ Արտաշես Ալեքսանյանը, Սոս Ջանիբեկյանը, Մկրտիչ Արզումանյանը, Դավիթ Հակոբյանը, Խորեն Լեւոնյանը, Անահիտ Քոչարյանն ու այլք:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ «ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՈՒՄ»

Տրանսպորտից օգտնվելու համար QR գնող քաղաքացիները վերջում առանց վճարելու իջնում են տրանսպորտից՝ օրինակ տերմինալի կամ վալիդատորի չաշխատելու պատճառով, իսկ TelCell ընկերությունը բոլոր գանձված գումարները անխտիր փոխանցում է Երեւանի քաղաքապետարանին: Ըստ քաղաքացիների՝ համակարգից դժգոհելու պատճառները շատ են, իսկ ArmLur.am-ը փորձել է հենց TelCell ընկերության հետ հասկանալ խնդիրները եւ ստանալ դրանց լուծման եղանակները:

TelCell ընկերությանը ներկայացրել ենք հետեւյալ խնդիրները:

Խնդիր 1

Մետաղադրամը նետում է քաղաքացին, չի ստանում կտրոն: Ի՞նչից է առաջանում խնդիրը եւ ո՞րն է լուծումը:

Խնդիր 2

Telcell Wallet-ը հաճախ խափանումներով է գործում, ո՞րն է դրա պատճառը եւ ինչպե՞ս եք խնդիրը լուծելու:

Խնդիր 3

Ինչո՞ւ կրճատվեցին տոմսերի օգտագործման ժամկետները՝ 30 օրից դառնալով 3-4 օր:

Կարծես թե տեխնիկական խնդիրներն օգտատերերի համար պարզ դարձան, անցնենք կենսաչափական տվյալներ նույնականացման հարցին:

Խնդիր 4

Ո՞ւմ են պատկանում Telcell Walletում նույնականացման ժամանակ մուտքագրված անձնական տվյալները:

Վալիդատորի կարմիր պատուհանը մերժման ահազանգով ոչ միշտ է սարքի տեխնիկական անսարքության պատճառ:

Խնդիր 4

Վալիդատորները չեն ընդունում բանկային քարտ կամ չեն ճանաչում QR-ը: Ինչո՞ւ:

Խնդիր 5

Ի՞նչ գումարներ է Telcell ընկերությունն աշխատում՝ Երեւանում տրանսպորտի տոմսային վճարման համակարգն ապահովելու համար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Հունվարի 17-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Ծննդյան վկայական» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ որդեգրման պետական գրանցման համար, եւ որքան է կազմում պետական տուրքի դրույքաչափը: Խնդրում եմ նաեւ տեղեկացնել, թե ինչ ժամկետում է կատարվում որդեգրման պետական գրանցումը:

Մարինե Վանեցյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ որդեգրման գրանցման համար պահանջվում է ներկայացնել՝

1) որդեգրողի (որդեգրողների) անձը հաստատող փաստաթղթերը (պատճենները),

2) դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը,

3) երեխայի ծննդյան ակտային գրանցման տեղեկանքը կամ ծննդի պետական վկայականը,

4) դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի միջոցով:

Միաժամանակ հայտնում ենք, որ որդեգրման պետական գրանցումը կատարվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու նույն աշխատանքային օրը: Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից որդեգրման պետական գրանցման՝ ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ որդեգրման պետական գրանցման համար հիմք է դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը: Որդեգրման պետական գրանցման համար դիմումը կարող է ներկայացվել որդեգրողի (որդեգրողների) կամ նրա լիազորած անձի միջոցով: Որդեգրման պետական գրանցումը կատարում է ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Ժենյա Օհանյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն):

Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

ՀՀ վարչապետ, պետության թիվ մեկ ղեկավար եւ պատասխանատու Նիկոլ Փաշինյանը հերթական հույժ կարեւոր գրառումն է արել իր ֆեյսբուքյան պաշտոնական էջում: Թերեւս այսպես էլ ղեկավարում է երկիրը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 -2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 -18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.1.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*